կարծեր որ մարգարէութիւնն այնպէս հանդիսական եղած ըլլայ ի Հայս՝ որպէս առ Ղեմականս և առ հին Գաղղիացիս, այլ աւելի ծածկաբար, ինչպէս յԱնձեւացիս և ի Բոմի եղածքն տան զուշակել։

Շարայարելի

ՏԱՐԷԳԻՐՔ ՀԱՅՈՑ

ԻԼԱԽԱՑ ԵՒ ՕԼԱԽԱՑ ԵՐԿՐԻ

(Տես յ'էջ 390)

ԿՈՆԴԱԿ ՄԵՍՐՈՎԲՊԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻԱՆ ԼԵՀԱՀԱՅՍ

ԷՐ Մեսրոպ կաթողիկոս ամենայն Հայոց. Զոր գրեմք յամենաւրհնեալ յականաւոր յաստուածապահ մեծ և գովելի մայրաքաղաքդ, ի Լաւդ և յԱլատամիրդ, ի Լուցկայն, և ի սահմանեալ վիճակ իւր, ի գնդ և ի վանորայքդ ի միասին*. Որոց այդոցիկ առ հասարակ բնակչացդ՝ մեր ի Քրիստոս Աստուած հաւատացեալ սիրելի ըստ հոգւոյ որդոց. Պատվական և սրբասէր քահանայից, աստուածասէր և գովելի պարոնացդ և խաւնայնոյդ, հարկաւոր և բարէպաշտ տանուտերացդ, իմաստուն և փառաւոր վայճառականացդ, քաղաքայնոցդ և ճանապարհորդացդ, ձեռնահմուտ արվեստագիտացդ, աշխատասէր հողագործացդ. և ամենայն հայասեռն և քրիստոսադաւան մերոց ժողովրդականացդ, մեծամեծացդ և փոքունցդ, արանցդ և կանանցդ, ծերոցդ և տղայոցդ, երիտասարդացդ՝ և կուսից. և ամենայն չափս հասակի. Կարողութեամբն Աստուծոյ Հաւր, շնորհաւք Սուրբ Հոգւոյն, սիրովն Քրիստոսի. առաքեմք ողջոյն սիրոյ ի մէնջ, և աւրհնութիւն առաքելական, յաստուածընկալ սրբոյ Նշանէս Վանկոյ, և ի յայլ սուրբ Նշանացս, և ի բազմաշնորհաբաշխ Այլոյս Սրբոյն Գրիգորի, և յերկնահանկէտ սուրբ աթոռոյս մեր սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և ի յայլ բազմութենէն սուրբ Նշխարացս առաքելոց և հայրապետաց և մարտիրոսաց, որք աստ կան հաւաքած. որոց արագահաս և սքանչելագործ կարաւղ զօրութեամբն աւրհնութեամբն և ուղղանութեամբն՝ պահպանեալ փրկիչդք ի յամենայն որոգայթից փորձութեանց վընտանկից հոգւոյ և մարմնոյ, տամք և որդուք և ամենայն գոյիւք. ամէն։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն իմ՝ ի Քրիստոս Աստուած յոյժ սիրեցեալ ըստ հոգւոյ ցանկալի որդիք, բազմաչարչար երկեամբք ծնունդք աւետարա-

* Ամենայն նոտարագիր բառերն ի բնագրին կարմրագեղով են գրուած. ինչպէս և կաթողիկոսին ձեռնագիրն։

digitised by A.R.A.R.@

նաև Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի որպէս աւրէն է ծննդական և մանկանցն բնութեանս փոխանակել զմիմեանս, որպէս որք ունին զմարմնաւորս իշխանութիւն, այսպէս և որք զհոգևորական վերակացութիւն. և ըստ սմին աւրինակի ես ինքն իբր զգթած հայր ի վերայ սիրելի որդոց՝ ի վերայ ձեր տապացած սիրով՝ ի տուէ և ի գիշերի հոգս բազումս էի վասն ձեր, թէ զիա՞րդ էր բարիոք կեանքդ ձեր ի մէջ այլազգ քրիստոնէից, առանց իմաստուն հովի և հոգևոր առաջնորդի։ Զի թէպէտ որ էք ընդ ձեռամբ մեր, այլ պարտ է հաւտին առանձին քաջ հովիւ ունել և ըստ հոգւոյ վերատեսուչ, զի մի՛ վնասեսցին ի յանմարմին գազանէն։ Իսկ այնոքիկ որ մինչև ցայժմ կային առ ձեզ՝ առանց մերոյ աթոռոյս հրամանի, ոչ էին ուղղակի՝ այլ վարձկանք. և ես մեծաւ պաղատանաւք աւր ըստ աւրէ հայցէի յԱստուծոյ գտանել այր իմաստուն և հանճարեղ ըստ սրտի իմոյ և ըստ գովելի արժանաց ձեր, կացուցանել ձեզ եպիսկոպոս և հոգևոր առաջնորդ. զոր այժմ ըստ հայցուածոց մեր լուաւ Աստուած աղաւթից մեր. և գտաք գովելի և իմաստուն զարժանապատուեալ և զառաքելաշնորհ եպիսկոպոս զՏէր Գրիգորս, եկեալ առ մեզ, և աւրհնեցաք ձեզ եպիսկոպոս, և եդաք զինք ձեզ հովիւ և հոգևոր առաջնորդ. Այլ և մերով բարձր առաքելական և հայրապետական ամէներևելի հրամանաւս պարգևեցաք ըզձեզ՝ ըզԼաւվ և ըզԱւլայտէմիրտ իւր սահմանեալ վիճակաւդ՝ Լուցկայիւ, իւր սեփական թեմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի, որպէս մեր քաջ սիրելի որդոյ. և մեծաւ պատուով և ջերմի սիրալից հայրական գթով առաքեցաք զդա առ ձեզ մերով ամէներևելի աւրհնութեամբ հրամայական գրովս, իբր զփեսայ ելեալ յառագաստէ՝ ի գրկաց մաւրս կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ. և աւգնականութեամբ և առաջնորդութեամբ Աստուծոյ գայ առ ձեզ. Զոր և մեր աղաւթանաւքէր պաղատանաւք հայցեմք ի յամենակալ արարչէն ամենայն արարածոց, աղաւթիւք Սրբոյն Գրիգորի, զի եկեալ մեծաւ փառաւք գտցէ զձեզ զամենեսեան առ հաստատուն սիրովն Քրիստոսի, խաղաղութեամբ շինութեամբ հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ, լի ամենայն բարութեամբ. կալ և շրջել ի միջի ձերում ուրախութեամբ, առաքելաբար խրատել և ուսուցանել զձեզ, գնալով յաւրէնս և ի պատուիրանս Աստուծոյ անարատութեամբ. և լիցի մեզ բարեաց յիշատակ։ Տացէ և զանձն իւր աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն՝ սրբութեամբ արդարութեամբ, հնազանդութեամբ խոնարհութեամբ, և յամենայն գործս առաքինութեան, առնելով ինքն և ապա ուսուցանել ձեզ առնել. Պահեսցէ զանձն իւր անբասիր առ մարդիկ և անդատապարտ առ Աստուած։ Կալցի առաքելաբար իշխանութիւն ի վերայ ձեր՝ կապելոյ և արձակելոյ ի յերկինս և ի յերկրի. զմեղուցեալսն և զամբաստամբեալսն յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սուրբ եկեղեցւոյ և զհակառակաւղսն՝ իրաւամբք խրատել, սաստել, կշտամբել և յանդիմանել զմեղս, մինչև զղջասցին և ցուցանեն պտուղս ապաշխարութեան և հնազանդութեան, մինչև դարձի ի չարէ։ — Կոչեսցէ զարժանաւորսն բազում քննութեամբ ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան և քահանայութեան, ի սպասաւորութիւն աստուածային խորհրդոյն, և ի տեսչութիւն ժողովրդեանդ։ Եւ ի վերայ այսր ամենայնի լիցի այցելու որբոց և այրեաց, աղքատաց և կարաւտելոց. ամենեցուն լիցի կարէկից սիրովն Քրիստոսի։ Պահեսցէ հաւատարմութեամբ և արդեամբք հնազանդութիւն առ սուրբ աթոռս, (ինքն) և

digitised by A.R.A.R.@

յաջորդք իւր։ — Որով և դուք ամենեքեան հոգևոր որդիք մեր առ հասարակ ի Քրիստոս, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ սրբազան արքեպիսկոպոսդ ձեր ըզՏէր Գրիգորդ՝ զիմ սիրելի որդեակդ՝ յոյժ սիրով և մեծաւ պատուով ընկալարուք, որպէս քաջ սիրելի որդի մեր, և հրեշտակ Աստուծոյ, և որպէս առաքելական այր, ի դրանէ սուրբ աթոռոյս առ ձեզ առաքած. և ամենայն հոգևորական խրատու դորա որ ի շահ և յաւգուտ լիցի ոգւոց ձեր՝ հնազանդութեամբ ունկնդիր լերուք. որպէս իմոյ անձինս, սիրով Հոգւոյն Սրբոյ։

Այլ և զամենայն կանոնեալ հաս և զիրաւունս աթոռոյ, զհաս տանց քահանայից և զընտանեաց նոցա, և զերախայրիս կալոց և հնձանաց, զորբանուէրսն և զտեառնականսն, և զիրաւունս մատղաց կարգաւորաց, յանկարծամահից և կենդանեաց, և զայլ ամենայն իրաւունս կենաց և մահու, անթերի և առանց տրտունջման, զուարթ և առատ սրտիւ տուք ի ձեռն դորա։ Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ կամ դիմադարձ լիցի սմա և հրամանիս մեր, կամ յայլազգի մատնել, կամ խորել յիրաւանց. և մի ոք իշխեսցէ ի քահանայից՝ հակառակ լինել այսմ հրամանի, և կամ այլ եպիսկոպոսի բարէկամ լինել, և կամ հակառակ դմա. զի որ ոք լիցի, մեր հայրապետութեան հրամանաւս նայ ի կարգէ լուծեալ ենք և բանադրել. և զարձակումն՝ ի Տէր Գրիգորէ առցէ, նոյն և թէ աշխարհական լինի. զի որ զայս արասցէ՝ կրեսցէ անիծիւք զպատիժն Կորխա և Դադանա, զԿայենի և զՅուդայի. և հնազանդեալքդ՝ աւրհնեալ եղիցին։ Որով աւրհնեալքդ ի յարքեպիսկոպոսէդ ձեր ի Տէր Գրիգորէդ՝ աւրհնեալ եղիցիք յԱստուծոյ և ի մէնջ. կապեալքն և աւրոշեալքն՝ ի նմին մնասցեն, և մինչև հնազանդութեամբ զըղջասցին։ — Վասն որոյ ի մտանել դորա և գրաւորական աւրհնութեան հրամանիս մեր առ ձեզ, իջցէ և շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր եւթնպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ. Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ. Տացէ ձեզ շինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն, և ավագաց ձեր ի վերայ քաղցրութիւն. բուսոց և ծառոց տնկոց այճողութեամբ և քաջ պտղաբերութիւն. պայճարեղէն անասնոց ձեր՝ անողալ ծննդականութիւն և ամենայն բարեաց լիութիւն և առողջութիւն։ Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր գործնականս և արդենականս, գործել զարդարութիւն, և զամենայն գովելի տեսակս առաքինութեան։ Եւ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան առ հասարակ հոգւով և մարմնով. որպէս զի զառաւրայս բարեաց վայելելով, և երկնից թագաւորութեանն և արքայութեանն հասանիցէք ձերաւք ննջեցելաւքն, ընդ ամենայն Սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ամենայն ի յաւիտեանս։

Շնորհեցաք և ի ձեռն արքեպիսկոպոսիս ձեր Տէր Գրիգորիդ՝ ձեզ պատուական պարգևս հոգևորականս՝ զեղն սուրբ աւծութեան՝ ըզարբալոյս և զաստուածագործակ զսուրբ Մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն յորդէգրութիւն Հաւրն երկնաւորի, և ի ժառանգակցութիւն Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյնն ի ճակատ նշան հաստատութեան, և ի յաւծումն քահանայից, և ի նորոգումն եկեղեցւոյ։ Եւ յամենայն ամի նոր առցէ ի մէնէ, և զհինն ի նորն խառնեսցէ. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Գրեցաւ գիր աւրհնութեան հրամանիս մեր ի մարմնաւոր ծննդեան Յի֊

digitised by A.R.A.R.@

տոսի Քրիստոսի ի ՌԳՃԿԴ (*) ամին, և ի Սրբոյն Գրիգորի ՌՀԴ ամի. և ի Թվիս ՊԺԳ, ի յամսեանն յունվի. ԺԵ. ի մեր կաթողիկոսութեանն՝ որ է ամ և կէս և աւր Ի (քսան)։ Եւ վասն առաւել հաստատութեան՝ իմով կամաւ ձեռնագրեցի սորև մերով սովորական կարմիր ձեռնագրաւս. և կընքեցաւ վերոյ տիրական մեծ մատանաւս կամաւք բարերար մարդասիրին Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

† Մեսրապ շնորհաւքն Աստուծոյ կաթողիկոս Ամենայն Հայաստանեայց

Կոստանդին կաթողիկոսի համառօտ գրածն ի ներքեւ Մեսրովպայ գրածին, ըստ իր ըսածին՝ «Գիր հոգեւորական հրամանի աւրհնութիւնն է և » կրկին հաստատութիւնն », իր նախորդին վերոգրեալ կոնդակին. յորում կ'իմացընէ որ անոր ընտրած եպիսկոպոսն Գրիգոր՝ եկաւ առ ինքն, կոնդակը ի հետ բերելով. Կոստանդին այլ ստորագրելով (կաթողիկոս ամենայն Հայոց) ի ԺԵ յունվարի, ի թուին ՊԻԳ (1375) կու հաստատէ զնոյն Գրիգոր յառաջնորդութիւն իւր թեմին, և օրհնելով զթեմականսն՝ կու դարձընէ ի տեղն։ Վիճակաց անուանքն այլ գրէ Լոռի, Աշտանեմիր և Լուցկայ։

---

* Թուականաց տառնորդական թիւերը՝ կամ հին կամ նոր ձեռք մի փոխեր է՝ տասն տասն թիւ աւելցընելով, որպէս զի կոնդակին ներքեւ գրուած Կոստանդին կաթողիկոսին թուականին յարմարի. բայց այնմ և տմսոյն օրը յունվարի ԺԵ ըրեր է, բնագրին մէջ ինչ ըլլալն չիմացուիր. Մեսրովպայ կաթողիկոսութեան տարւոյ վրայ այլ քիչ մի այլայլութիւն նշմարուի բայց առուղութենէ հեռի չէ երեւցածն։

Տարայարեցի

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 394)

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ԽԻԳՈԿԻԱՑԻ ԱԲԳԱՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՆՑԵԱԼ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ

ՀԱՅ տպագրութեան պատմութեան երկրորդ շրջանը կը բանան Միքայէլ կաթողիկոս, և իր ուսումնասէր ջանիցն և փափաքին գործադիր՝ Եւդոկիացին Աբգար, իրեն աշխատակից ունենալով զորդին զՍուլթանշահ։

Միքայէլ՝ Սրբոյ Լուսաւորչին հայրապետական աթոռը կը գրաւէ յամս 1547–1556։ Այնպիսի դարու և ատենի մը մէջ՝ յորում ազգերնիս քաղաքական իշխանութիւնը կորուսած, եկեղեցական նուիրապետութենէն կը յուսար իր աղէտից և թշուառութեանց դարմանը. մարտաբաղդաբար այդ հոգեւորական իշխանութեան ամէն հնարաւոր ջանքովը և մտադիր խնամովքն ալ, փափաքելի բարեկեցութեան վիճակի մը մէջ չէր գտնուէր։ Անդադար պատերազմունք և աւարառութիւնք զդողանդակ երկիրն ահաբեկած և սասանեցուցած էին, և ամենուրեք տարածուած նաև նիւթական կենաց ոչ ապահով դրութիւն մը։

digitised by A.R.A.R.@